Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Ա. Եղոյանի գործուղման արդյունքների մասին

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

  Ամալյա Եղոյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**

  ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

  Թուրքիայի Հանրապետություն (ք. Ստամբուլ), 2018թ. ապրիլի 24–26-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

  Սևծովյան տնտեսական համագործակցության (ՍԾՏՀ) կազմակերպություն

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿ**

Սևծովյան տնտեսական համագործակցության (ՍԾՏՀ) կազմակերպության Տեղեկատվական ու հաղորդակցման տեխնոլոգիաների հարցերով աշխատանքային խմբի նիստին մասնակցություն

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

2018 թվականի ապրիլի 25-ին քաղաք Ստամբուլում (Թուրքիայի Հանրապետություն) կայացել է Սևծովյան տնտեսական համագործակցության (ՍԾՏՀ) կազմակերպության Տեղեկատվական ու հաղորդակցման տեխնոլոգիաների հարցերով աշխատանքային խմբի նիստը, որին Հայաստանը, որպես խմբի համակարգող և ՍԾՏՀ-ում նախագահող երկիր, վարել է աշխատանքային խմբի նիստը և ներկայացրել նշված բնագավառում գործողությունների պլանը:

Հանդիպման օրակարգում ընդգրկված հարցերից են եղել ՍԾՏՀ արդյունավետության բարձրացումն ու տարածաշրջանային համագործակցության նոր տնտեսական օրակարգի իրականացումը, որոնք նպատակաուղղված են անդամ երկրներում կենսամակարդակի բարձրացմանը:

Վերոնշյալ հանդիպման շրջանակներում անդամ-պետությունների ներկայացուցիչները քննարկել են ՍԾՏՀ անդամ պետություններում վերջին շրջանում տեղի ունեցած ՏՀՏ զարգացումները, ներկայացվել է 2018-2019թթ. գործողությունների ծրագիրը, ՏՀՏ ոլորտում նախագծերի մշակման և խթանման հնարավորությունները, ՏՀՏ-ի աշխատանքային խմբի գործողությունների ծրագիրը, ՍԾՏՀ-ի, այլ միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների և հաստատությունների միջև համագործակցության վերաբերյալ հարցեր:

Քննարկման ընթացքում յուրաքանչյուր անդամ պետության կողմից ներկայացվել է նաև տվյալ երկրի ՏՀՏ ոլորտում առկա ձեռքբերումները, հնարավորությունները և մարտահրավերները:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Ամալյա Եղոյանը ներկայացրել է ՀՀ ՏՏ ոլորտի ծրագրերը, խոսել է տեխնոպարկերի, սկսնակ ընկերությունների և նորաստեղծ սթարթափերի, կառավարության աջակցությամբ ոլորտում իրականացվող բարեփոխումների մասին: Ամալյա Եղոյանն առաջարկել է Սևծովյան տնտեսական համագործակցության անդամ երկրներին հանդես գալ թիրախային ծրագրերով, իսկ խնդիրներն ու լուծումները դարձնել առարկայական:

- **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ**

Այցի շրջանակներում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Ամալյա Եղոյանը հանդիպում է ունեցել Կորեայի Տեղեկատվական հետազոտական և զարգացման ինստիտուտի գլոբալ համագործակցության տնօրեն դոկտոր Սենգ-Բիք Քրիս Քենգի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել է «Խելացի քաղաք» ծրագիրը և ձեռք է բերվել պայմանավորվածություն ծրագրի հաջող փորձը կիրառել նաև Երևանում:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

  ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
  տեխնոլոգիաների նախարարի տեղակալ
  Ամալյա Եղոյան
  02.05.2018թ.